ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01

ք. Երևան «05» հոկտեմբերի 2022թ.

«ԱՎՏՈՎԱՐՁՈՒՅԹ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02673717, հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 4/7, ԻՄՊԵՐՈՒՄ ՊԼԶ 4-րդ հարկ, 10-րդ սենյակ), ի դեմս տնօրեն Արմեն Բորիս Աբովյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վարձատու», մյուս կողմից «Առողջապահության նախարարությունը» ի դեմս Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վարձակալ», միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել տրանսպորտային միջոցներ, այսուհետ՝ Ավտոմեքենաներ, իսկ Վարձակալը պարտավորվում է ընդունել և վճարել դրա դիմաց սույն Պայմանագրով նախատեսված չափով և ժամկետում:

1.2. Վարձակալության տրամադրվող Ավտոմեքենաների տվյալները ներկայացվում են սույն Պայմանագրին կից Հավելված N1-ում: Հավելված N1-ը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

1.3. Ավտոմեքենաները Վարձակալին տրամադրվում են պատշաճ վիճակում՝ տեխնիկապես անթերի և մաքուր:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն պարտավոր է.

2.1.1. Վարձակալին տրամադրել Հավելված N1-ում նշված Ավտոմեքենաները սարքին վիճակում, ինչպես նաև Ավտոմեքենաների շահագործման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

2.1.2. Ավտոմեքենաները Վարձակալին հանձնելուց առաջ վճարել օրենքով նախատեսված տուրքերը, հարկերը, ապահովագրական վճարները՝ վարձակալության ընթացքում Ավտոմեքենան անխափան օգտագործելու համար:

2.2. Վարձատուն իրավունք ունի.

2.2.1. Պահանջել Վարձակալից օգտագործել Ավտոմեքենաները սույն Պայմանագրի Պայմաններին համապատասխան և ժամանակին վճարել Պայմանագրով նախատեսված վարձավճարը:

2.2.2. Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը, եթե Վարձակալը խախտել է սույն Պայմանագրի որևէ դրույթ:

2.3. Վարձակալը պարտավոր է.

2.3.1. Ընդունել Ավտոմեքենաները և վճարել դրա դիմաց սույն Պայմանագրով նախատեսված չափով և ժամկետում:

2.3.2. Տեխնիկական անսարքություն նկատելիս անմիջապես այդ մասին տեղեկացնել Վարձատուին: Եթե Ավտոմեքենաների տեխնիկական անսարքությունները առաջացել են Վարձակալի մեղքով, ապա նա ամբողջությամբ պարտավոր է փոխհատուցել ծագած վնասը:

2.3.3. Վերջնաժամկետին պատշաճ վիճակում հետ վերադարձնել Ավտոմեքենաները, բոլոր փաստաթղթերը և պարագաները: Ավտոմեքենաները Վարձատուին հետ վերադարձնելիս պետք է լինեն տեխնիկապես անթերի և մաքուր:

2.4. Վարձակալն իրավունք ունի.

2.4.1. Սույն Պայմանագրի 3.2. կետով նախատեսված ողջ ժամանակահատվածում անարգելք օգտագործել Ավտոմեքենաները ՀՀ տարածքում և (կամ) ՀՀ տարածքից դուրս:

2.5. Ավտոմեքենաների հանձման և ընդունման ժամանակ Վարձակալը Վարձատուի մասնագետի կամ Վարձատուի հետ անձամբ ըստ անհրաժեշտության զննում է Ավտոմեքենաները և կազմում է նրանց վիճակի վերաբերյալ համապատասխան հանձման և ընդունման ակտեր: Ավտոմեքենաների հանձման և ընդունման ակտը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.6. Եթե Վարձակալը հրաժարվում է ստորագրել հանձման-ընդունման ակտը Ավտոմեքենաները վերադարձնելիս, ապա Վարձատուն իրավունք ունի կազմել այն վկաների ներկայությամբ և օգտագործել ըստ անհրաժեշտության:

2.7. Առանց Վարձատուի թույլտվության Վարձակալն իրավունք չունի Ավտոմեքենաների վարման իրավունք տալ որևէ այլ անձի:

2.8. Ավտոմեքենաները թույլատրվում է շահագործել միայն ՀՀ տարածքում և (կամ) ՀՀ տարածքից դուրս: ՀՀ տարածքից դուրս Ավտոմեքենաները շահագործելիս Վարձակալը պարտավոր է նախապես գրավոր ձևով տեղեկացնել Վարձատուին:

2.9. Արգելվում է Ավտոմեքենաների տեխնիկական վերանորոգումը Վարձակալի կողմից:

3.Վարձակալության արժեքը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված օրավարձը կազմում է 500,000.0 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3.2. Ավտոմեքենաները վարձակալության են հանձնվում 3 /երեք/ օր ժամկետով:

3.3. Ավտոմեքենաները վարձակալության են հանձնվում 05.10.2022թ.-ից մինչև 07.10.2022 թվականը:

3.3. Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,500,000.0 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ:

3.4. Վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունը՝ Հավելված 2, երկկողմանի ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում վարձատուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.5. Վարձակալության է տրամադրվում նույն Հավելված 1-ով ներկայացված ավտոմեքենայից 5 հատ

:4. Կողմերի պատասխանատվությունը

Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգդրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.2. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև սույն Պայմանագրով սահմանված Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարելը:

6.3. Սույն Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմի մոտ գտնվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
«Առողջապահության նախարարություն»	«ԱՎՏՈՎԱՐՁՈՒՅԹ» ՍՊԸ
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02673717
Հասցե՝ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/7, Իմպերիում ՊԼԶ, 4-րդ հարկ, 10-րդ սենյակ
Հ/Հ ՀՀ ՖՆ գանձապետական համապատասխան հաշվեհամարից՝ _900011041218_	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ- 1570029058320100
Գլխավոր քարտուղար՝_____Վ. Գրիգորյան ստորագրություն	Տնօրեն՝_____Ա.Աբովյան ստորագրություն

Կ.Տ.

Կ.Տ.

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.	Ավտոմեքենայի մակնիշը	Mercedes S class
2.	Թողարկման տարեթիվը	2017
3.	Տիպարը	W222
4.	ՏՄ տեսակը	Թեթև մարդատար
5.	Գույնը	Սև մետալիկ
6.	Քանակ	5 հատ

Վարձակալ	Վարձատու
«Առողջապահության նախարարություն»	«ԱՎՏՈՎԱՐՁՈՒՅԹ» ՍՊԸ
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02673717
Հասցե՝ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/7, Իմպերիում ՊԼԶ, 4-րդ հարկ, 10-րդ սենյակ
Հ/Հ ՀՀ ՖՆ գանձապետական համապատասխան հաշվեհամարից՝ _900011041218_	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ- 1570029058320100
Գլխավոր քարտուղար՝ _____Վ. Գրիգորյան ստորագրություն	Տնօրեն՝ _____Ա.Աբովյան ստորագրություն

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված 2

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
«ԱՎՏՈՎԱՐԶՈՒՅԹ» ՍՊԸ	«Առողջապահության նախարարություն»
ՀՎՀՀ 02673717	ՀՎՀՀ 02507171
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/7,	Հասցե՝ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3
Իմպերիում ՊԼԶ, 4-րդ հարկ, 10-րդ սենյակ	Հ/Հ ՀՀ ՖՆ գանձապետական համապատասխան
Հ/Հ 1570029058320100	հաշվեհամարից՝ _900011041218_

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 07 » «հոկտեմբերի» 2022 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Տրանսպորտային միջոցների վարձակալության ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «05» «հոկտեմբերի» 2022թ.
Պայմանագրի համարը՝ N1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « 07 » « 10» 2022 թ. դուրս գրված N Բ7651437613 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Վարձույթ	Տրանսպորտային միջոցների վարձույթ	1	1	05-07.10.2022թ	05-07.10.2022թ	1,500.0	Ըստ պայմանագրի

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.